

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

7 նոյեմբերի 2022թ.
ք. Երևան

N 86-Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ
ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԻ ՁԵՎԸ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը որոշում է.

1. Սահմանել ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների անդամների թեկնածուների դիմումի ձևը և անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Դիմումի ձևը տրամադրում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, այն կարող է ներբեռնվել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքից: Եթե դիմողը ցանկանում է միաժամանակ դիմում ներկայացնել մեկից ավելի ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների վերաբերյալ, ապա յուրաքանչյուր ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի համար ներկայացնում է առանձին դիմում:

3. Դիմումները ներկայացվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողով և մուտքագրվում են համակարգչային եղանակով՝ ըստ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Վ. Հովակիմյան

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Դ Ի Մ ՈՒ Մ

ԹԻՎ _____ ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԱՆԴԱՄԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ

Ես՝

(անունը, հայրանունը, ազգանունը)

հաշվառված՝

(հաշվառման վայրը)

(նշվում է բնակության վայրը, եթե տարբերվում է հաշվառման վայրից)

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների համաձայն՝

(V ձևի նշան է դրվում ստորև ներկայացված այն պայմանների դիմացի քառանկյունում (քառանկյուններում), որին (որոնց) համապատասխանում են դիմող թեկնածուի տվյալները)

- ունեմ ընտրական իրավունք,
- ունեմ բարձրագույն կրթություն,
- հրապարակային քաղաքական գործունեություն չեմ ծավալում,
- Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 41-րդ հոդվածով ընտրական հանձնաժողովի անդամի համար սահմանված սահմանափակումներն ինձ վրա չեն տարածվում:

Խնդրում եմ ինձ ընդգրկել թիվ _____ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կազմում:

Դիմումին կցվում է՝

1. 3 x 4 չափի 2 գունավոր լուսանկար,
 2. անձնագրի 2-րդ և 3-րդ էջերի կամ նույնականացման քարտի լուսապատճենները,
 3. բարձրագույն կրթություն ունենալը հավաստող փաստաթղթերի (կրթության մասին վկայական, դիպլոմ և այլն) լուսապատճենները,
 4. ինքնակենսագրություն:
- Ընդամենը՝ _____ թերթ:

Դիմող՝ _____
(անունը, ազգանունը)

(ստորագրություն)

«_____» _____ 20 թ.